Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտություն է առաջացել կատարել հետևյալ փոփոխությունները.

COVID19-ով պայմանավորված՝ բժշկական ցուցումով ինքնամեկուսացված՝ սննդամթերքի և սանիտարահիգենիկ պարագաների կարիք ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու նպատակով Արարատի մարզպետարանի հետ կնքվել է ընթացիկ դրամաշնորհի հատկացման պայմանագիր 366 254 դրամի չափով՝ 65 անձանց համար, որը ներառվել է բյուջեի եկամտային և ծախսային մասերում: Ինքամեկուսացվածների թվի ավելացման հետ կապված կնքվել է համաձայնագիր, ըստ որի ինքնամեկուսացվածների թիվը կազմել է 116, գումարը՝ 653 623 դրամ: Առաջարկվում է բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել համապատասխան փոփոխություն ընթացիկ դրամաշնորհի հատկացման տարբերության՝ 287 369 դրամի չափով:

Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ մոտավոր 180 միավոր հողամասերի մասնագիտական չափագրման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ՝ 460 000 դրամի չափով:

Մասիսի ՔԿԱԳ-ի էներգետիկ ծախսերի համար նախատեսված միջոցները չեն բավարարում մինչև տարեվերջ ծածկելու ծախսերը, որը նախատեսված է եղել հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարված ծախսը: Անհրաժեշտ է լրացուցիչ 25 000 դրամ հատկացնել ՔԿԱԳ-ի էներգետիկ ծախսերին:

Մասիսի քաղաքապետարանի դիմացի այգու բեմահարթակը քայքայվել է և կարիք ունի ընթացիկ նորոգման, որի համար շուկայի ուսումնասիրությունից պարզվել է, որ անհրաժեշտ կլինի 940 000 դրամ:

Մասիս քաղաքի 2-րդ թաղամասի 2-րդ փողոցի թիվ 55 տան բնակիչ Արտյոմ Բարսեղյանի սեփականություն հանդիսացող 105 թև հավերը թափառող շների կողմից ոչնչացվել է, քաղաքացուն պատճառելով զգալի նյութական վնաս: Ա. Բարսեղյանը դիմել է քաղաքապետարան՝ պատճառված վնասը որոշակի չափով վերականգնելու աջակցության խնդրանքով: Փաստի վերաբերյալ ս/թ հուլիսի 14-ին կազմվել է արձանագրություն ստեղծված հանձնաժողովի կողմից:

Առաջարկվում է թույլատրել՝ 100 000 դրամ հատկացնել սոցիալական հատուկ արտոնությունների այլ նպաստներ հողվածին՝ Արտյոմ Մարտիրոսյանին աջակցելու համար:

Վերոնշյալ ընթացիկ ծախսերը իրականացնելու համար առաջարկվում է 2020թ. բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով՝ ուսանողների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված միջոցները նվազեցնել 1275 000 դրամով, այն ուղղելով վերոնշյալ ծախսերին:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից մուտքերի տարեկան առաջադրանքը 2020թ. օգոստոսի 31-ի դրությամբ նախատեսվածից ավելի է կատարվել 21389,2 հազար դրամով, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում և ուղղել կապիտալ աշխատանքներին:

Համայնքում կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար ձեռք է բերվել փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային աշխատանքների փաթեթներ:

Համաձայն ձեռք բերված նախագծա-նախահաշվային փաթեթների՝ համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է հատկացնել միջոցներ հետևյալ շինարարական աշխատանքների համար .

1. Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տանիքի, աշխատասենյակների և դահլիճի հիմնանորոգման համար՝ 85 972,8 հազար դրամ.
2. Մասիս քաղաքի 1-ին շենքի դիմացի այգու հիմնանորոգման համար՝ 22500,0 հազար դրամ.
3. Մասիս քաղաքի 5-րդ դպրոցի հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման համար՝ 56 400,36 հազար դրամ.
4. Մասիս քաղաքային համայնքի 1-3-րդ փողոցների շարունակության, 1-10-րդ փողոցների փակուղիների, 1-7-րդ թաղամասերի, Մասիս Կայարանի մի հատվածի արտաքին լուսավորության ցանցի անկացման համար՝ 135 491,72 հազար դրամ.
5. Մասիս քաղաքի Նոր թաղամաս 32 շենքի բակի բարեկարգման համար՝ 5 303,52 հազար դրամ:

Ընդհանուր կապիտալ աշխատանքների ձեռք բերման համար անհրաժեշտ է 305668,4 հազար դրամ, որը առաջարկվում է հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածից 284279,2 հազար դրամ և համայնքի սեփականություն հանդիսացող հողերի իրացումից մուտքերից 21389,2 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան